ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԷԱՃԱՊՁԲ-2023/16-23-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Հերացի» և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների աշխատանքների կազմակերպման նպատակով բժշկական նշանակության ապրանքների, բժշկական սարքավորումների և դեղորայքի ձեռքբերման համար կազմակերպված **«ԷԱՃԱՊՁԲ-2023/16-23-ԵՊԲՀ»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2023 թվականի հոկտեմբերի 04-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2023 թվականի հոկտեմբերի 06-ին տրամադրված պարզաբանումը.

Հարցադրում N 1: Հարգելի գործընկեր, խնդրում ենք պարզաբանել.

ա) 2-րդ չափաբաժնի << Quick Vision բազմաֆունկցիոնալ ծրագիրն ապահովում է հետազոտման բարձր թվային արդյունքներ,>> չափորոշիչը ՝ այն խախտում է ՀՀ Գնումների մասին Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը՝ գնման առարկայի բնութագրերը՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառեր: Խնդրում ենք կատարել համապատասխան փոփոխություն տեխնիկական բնութագրում համաձայն վերը նշված ՀՀ Գնումների մասին օրենքի հոդվածի:

բ) 2-րդ չափաբաժնի <<24 ծրագրի ընտրության հնարավորություն>> չափորոշիչը՝ թվարկեք խնդրում ենք Ձեր կողմից նշված 24 ծրագրերի գործառույթները՝ մասնակիցների կողմից համապատասխան առաջարկը ճիշտ կազմելու համար: Կանխավ շնորհակալ ենք::

Պարզաբանում N 1: Հարգելի՛ գործընկեր, ի պատասխան Ձեր կողմից բարձրաձայնված հարցումների՝ հայտնում ենք, որ.

ա) Հրավերին կից ներկայացված ֆայլում՝ բոլոր չափաբաժինների մասով, 3 աստղանիշով, առանձնացված տողով ներկայացվել է հղումներ օգտագործելիս «կամ համարժեք» արտահայտության կիրառական լինելու հանգամանքը, ուստի գտնում ենք, որ օրենքի՝ Ձեր կողմից մատնանշված հոդվածի պահանջները չեն խախտվել և հրավերում փոփոխություն կատարելը հիմնազուրկ է:

բ) Մասնակիցների կողմից առաջարկները ճիշտ կազմելու համար ստորև ներկայացվում է 24 ծրագրերը՝ հաշվի առնելով, որ դրանք նախատեսված են իրագործելու հետևյալ 12 հետազոտությունները՝ նախապես կատարելով մեծահասակի կամ երեխայի ընտրանքը (x2).

պանորամային	1. Standard 2. Half Panoramic L 3. Half Panoramic R 4. Frontal Dentition 5. Low Dose 6. Ortho Rad
կծվածքի	7. Right 8. Left 9. Bilateral
սինուս	10. Sinus exam
քունք-ստործնոտային հոդ	11. TMJ - Standard (x4) 12. TMJ -Single Phase (x2)

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող **Միքայել Ղարիբյանին:**

Հեռախոս՝ **010 301000 (438):**

Էլեկտրոնային փոստ՝ **marketing.ysmu8@gmail.com**

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Լ. Դանիելյան
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հակոբյան
(ստորագրությունը)

_____ Ս. Խոյեցյան
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Ղարիբյան
(ստորագրությունը)

ОБЪЯВЛЕНИЕ
о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссией № 2 от 06-го октября 2023 года и опубликовывается в соответствии со статьей 29 Закона Республики Армении «о Закупах».

Код процедуры «ԷԱՃԱՊՁԲ-2023/16-23-ԵՊԲՀ»

Оценочная комиссия процедуры закупки под кодом **«ԷԱՃԱՊՁԲ-2023/16-23-ԵՊԲՀ»** организованная с целью приобретения изделий медицинского значения, медицинского оборудования и лекарственных средств в целях организации работ больничных комплексов «Гераци» и «Мурацан» для нужд Фонда «Ереванского государственного медицинского института имени М.Гераци», ниже предоставляет запрос полученный от 04-го октября 2023 года, относительно приглашения с тем же кодом и разъяснение по нему, предоставленное 06-го октября 2023 г.

Запрос N 1. Уважаемый партнер, пожалуйста, уточните.

а) в лоте № 2 критерий «Универсальное программное обеспечение Quick Vision обеспечивает высокие цифровые результаты исследования» что нарушает Закона РА <<О закупках>> часть 5 статья 13: характеристики предмета закупки - характеристика предмета закупки не должна содержать требования или ссылки на какой-либо товарный знак, фирменное наименование, патент, эскиз или модель, страна-производитель или конкретный источник или производитель, если без них невозможно охарактеризовать предмет покупки. При использовании ссылок описание характеристики должно содержать слова «или аналогичный». Просим внести соответствующие изменения в техническую характеристику согласно статье Закона РА «О закупках», указанной выше.
б) в лоте № 2 критерий «возможность выбора 24 программ» Перечислите, пожалуйста, функции упомянутых Вами 24 программ, чтобы участники могли правильно составить соответствующее предложение.
Заранее благодарим

Разъяснение N 1: Уважаемый коллега, в ответ на Ваши запросы сообщаем Вам, что:

а) В файле, приложенном к приглашению, во всех лотах обстоятельство применения словосочетания «или аналогичный» при использовании ссылок было отмечено 3 звездочками, отдельной строкой, поэтому считаем, что требования статьи закона Указанное вами не было нарушено и внесение изменений в приглашение необоснованно.

б) Для того, чтобы участники правильно составили предложения, ниже представлены 24 программы с учетом того, что они рассчитаны на проведение следующих 12 исследований с предварительной выборкой взрослого или ребенка (x2):

панорамный	1. Standard 2. Half Panoramic L 3. Half Panoramic R 4. Frontal Dentition 5. Low Dose 6. Ortho Rad
Прикус	7. Right 8. Left 9. Bilateral
Синус	10. Sinus exam
Височно-нижнечелюстной сустав	11. TMJ - Standard (x4) 12. TMJ -Single Phase (x2)

Для получения дополнительной информации в связи с обьявлением можно обратится к секретарю оценочной комиссии **Микаэл Гарибян**.

Телефон 010 301000 (438):

Эл. Почта marketing.ysmu8@gmail.com

Председатель комиссии _____ **Л. Даниелян**
(подпись)

Члены комиссии _____ **А. Акопян**
(подпись)

_____ **С. Хоецян**
(подпись)

Секретарь Комиссии _____ **М. Гарибян**
(подпись)